

ЭМИНСКИЙ ЭТНОГРАФИЧЕСКИЙ СБОРНИКЪ
ВЫПУСКЪ IX.

ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ Թ.

Провинціальный Словарь

Р. Ачаріана

ՀԱՅԵՐԷՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Յօրհեղ

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1. Հայերէնի 31 բարբառներ եւ անոնց դասաւորութիւնը.—2. Ի՞նչ տեսակ բառեր կը պարունակեն հայ բարբառները (բնիկ, օտար եւ գաւառական բառեր).—3. Գաւառական բառաբաններու պատմականը.—4. Գաւառական բառերու ուղղագրութիւնը.—5. Հայ բարբառներու բնութեան ու ձայնաբանութիւնը.—6. Աւստրոփեան կազմութեան մասին:

1. Ձկայ աշխարհիս մէջ լեզու մը որ բարբառներ չունենայ, Հայերէնը խօսուելով այնպիսի երկրի մը մէջ, որ բնական սահմաններով անջրպետուած բազմաթիւ ուրոյն ուրոյն գաւառներէ կը բաղկանայ, միւս կողմէ հայ ժողովուրդը գաղթականութեամբ սփռուած ըլլալով շատ ընդարձակ տարածութեան մը վրայ՝ Հնդկաստանէն մինչև Աւստրիա, բնական է, որ պիտի ունենար շատ բազմաթիւ բարբառներ:

Համաձայն այն դասաւորութեան, որ մանրամասն բացատրած եմ իմ Classification des dialectes arméniens աշխատութեան մէջ, հայերէն բարբառները կը բաժնուին երեք ճիւղի, ընդամենը 31 բարբառներով:

Ա. Ում-ի ճիւղ (որ է այլոց արեւելեան հայերէն կոչածը). ունի 7 բարբառ:

1. Երեւանի բարբառ (Երեւան, Էջմիածին, Պայազիտ, Նոր-Բայազիդ, Շուշաւէր, Շամշադին, Թիֆլիզի Հաւլաբար Թաղը, Թաւրիզի Ղալա Թաղը ևն):

2. Թիֆլիզի բարբառ:

3. Ղարաբաղի բարբառ (Շուշի, Գանձակ, Նուխի, Բագու, Դերբենդ, Աղստաֆա, Դիլիժան, Ղարաքիլիսէ, Ղազախ, Լոռի, Ղարադաղ, Մուսումբար, Թաւրիզի Լիւլա Թաղը, Պուրտուր, Էօտէմիշ (Փոքր Ասիոյ մէջ), Թուրքեստան, Թաթարիստան, Մանչուրիա ևն ցրուած հայոց մեծ մասը):

4. Շամախի բարբառ (Շամախի, Ղուբա):
5. Աստրախանի բարբառ (Աստրախան և հիւսիսային Կովկաս):
6. Զուղայի բարբառ (Հին և Նոր Զուղա, նաև Հնդկաստանի, Շիրազի, Համատանի, Բուշիրի, Թեհրանի, Ղազվինի, Ռաշտի, Էնզելիի հայոցմէ շատերը):
7. Ագուլիսի բարբառ (Ագուլիս, Յդնա, Հանդամէշ, Տանակերտ, Ռամիս, Դաշտ, Քաղաքի կն):
- Բ. Կը-ի ճիւղ (որ է այլոց արևմտեան հայերէն կոչածը). ունի 21 բարբառ:
 1. Կարնոյ բարբառ (Կարին, Ալէքսանդրապոլ, Կարս, Ախալքալաք, Ախալցխա, Բասեն, Նարման, Խոտըշուր, Բաբերդի գիւղերը):
 2. Մշոյ բարբառ (Մուշ, Սասուն, Բաղէշ, Խիզան, Խլաթ, Արճէշ, Պուլանլիս, Մանազկերտ, Խնուս, Ալաշկերտ, Ապարան, 21 գիւղ Նոր-Բայազիդի շուրջը, Թորիս, Դուշմանա և Էշտիս գիւղերը Ախալքալաքի քով):
 3. Վանի բարբառ (Վան, Դիառիկ, Մոկս, Ողմի, Նորտուզ, Շատախ, Պաշքալէ, Բասարգեհար գիւղը Նոր-Բայազիդի մօտ):
 4. Տիգրանակերտի բարբառ (Տիգրանակերտ, Լճէ, Հազրօ, Հազգօ, Խիան, Սեհրեկ, Ուռֆա կամ Նդեսիա):
 5. Խարբերդի և Ներզնկայի բարբառ (Ներզնկա, Խարբերդ, Բալու, Ճապաղշուր, Չմշկածագ, Չարսանճաք, Գղի, Տէրսիմ, Կամախ, Մանիսայի վերի թաղը):
 6. Շապին-Քարա-Հիսարի բարբառ (Շապին-Քարա-Հիսար, Ամպտեր):
 7. Տրապիզոնի բարբառ (Տրապիզոն, Բաբերդ, Կիւմիշլիանէ, Կիրասոն, նաև Պաթում, Փոթի, Ահաստոպոլ, Եալթա, Կերչ հաստատուած հայոցմէ շատերը):
 8. Համշէնի բարբառ (Համշէն, Տրապիզոնի գիւղերը, Իւնիէ, Փացա, Թերմէ, Չարշամպա, Սամսոնի, Սինօպի և Իզմիտի գիւղերէն մաս մը, նաև Սոխում, Սոչի, Մծարա, Մեհրելա, Ադլեր, Շապշուկա գաղթած հայոցմէ մեծ մասը):
 9. Մալաթիոյ բարբառ (Մալաթիա, Հիւսնիմանսուր կամ Ատիեաման):
 10. Կիլիկիոյ բարբառ (Հաճին, Ձէյթուն, Մարաշ, Քիլիս, Փայաս, Իսկէնտէրու, Սուէտիա, Անտիօք, Քեսապ կն. Թերևս նաև Սթանոս, Նալլը խան, Սիվրիհիսար և Եօղլատի գիւղերէն ոմանք):
 11. Սիւրիոյ բարբառ (Արամօ և Թերևս այլ գիւղեր Ճիւրի Շուղուրի մօտ):

12. Արաբկերի բարբառ (Արաբկեր, Տիվրիկ, Կիւրին, Տարէնտէ և Կեսարիոյ գիւղերը):

13. Ակնայ բարբառ (Ակն և իր գիւղերը):

14. Սեբաստիոյ բարբառ (Սեբաստիա և իր գիւղերը):

15. Նւղոկիոյ բարբառ (Նւղոկիա, Ամասիա, Մարսուան, Օրտու, Սամսոն, Սինոպ):

16. Զմիւռնիոյ բարբառ (Զմիւռնիա, Մանիսա, Գասապա, Մէնէմէն, Պայընտուր, Բըրքադաճ):

17. Նիկոմիդիոյ բարբառ (Նիկոմիդիա, Ատաբազար, Նալովա, Ասլանպէկ, Պարտիզակ, Բազարգիւղ, Կէյվէ, Օրթագիւղ, Սէօլէօղ, Պէնլի, Իգնիկ, Օվաճըք և այլն):

18. Պօլսոյ բարբառ (Պօլիս):

19. Ռոտոսթօյի բարբառ (Ռոտոսթօ և Մալկարա):

20. Խրիմի բարբառ (Խրիմ, Թէոդոսիա, Սիմֆէրոպոլ, Ղարասու Բազար, Պաղչէսէրայ, Նւպատորիա, Նոր-Նախիջևան, Ռոստով, Ստաւրոպոլ, Նկատերինոտար, Նկատերինոսլաւ, Անափա, Մայկոպ, Թականրոք, Դնեբը, Նօղայսկ, Նովու Չերքասք):

21. Աւստրօ-Հոռնգարիոյ բարբառ (Աւստրիա, Հոռնգարիա, Լինաստան, Բուքովինա, Թրանսիլանիա, ցրուած հայերը, որոնց կհաւորոններն են Սուչաւա և Գութի):

Գ. ել-ի ճիւղ:

1. Մարաղայի բարբառ (Մարաղա և Ուրմիա):

2. Խոյի բարբառ (Խոյ, Սալմաստ, Մակու, Իգգիր, Նախիջևան, բազմաթիւ գիւղեր Ղարաբաղի, Սիսիանի և Զանգեզուրի մէջ):

3. Արթուինի բարբառ (Արթուին, Արդահան, Արդանուչ, Օլթի):

2. Եթէ քննենք յիշեալ 31 բարբառները բառագիտական տեսակէտով, կը տեսնենք որ կը բաղկանան երեք տարրերէ.

Ա. Բուն հայերէն բառեր. այսպէս կը կոչենք այն բառերը՝ որ մերթ մաքուր և մերթ այլալուծած ձևով կը ներկայացնեն հին հայերէնի ծանօթ ձևերը. ուրիշ խօսքով բուն հայերէն կը համարենք հին հայ մատենագրութեամբ մեզ աւանդուած բառերը. ինչ. հաց, գաւի, աղանաւմ ևն:

Բ. Օտար բառեր. ասոնք յիշեալ առաջին դասակարգէն դուրս գտնուած այն բառերն են, որոնք զանազան ծառար լեզուներէ փոխ առնուած են: Այս փոխառութեանց մէջ առաջին տեղը կը բռնեն Թուրքերէնէ փոխառեալ բառերը, որոնց գումարը մինչև 4200 կը բարձրանայ. յետոյ կուգան քրտերէնէ, վրացերէնէ, ռուսերէնէ (600) և իտալերէնէ (200) փոխառեալ բառերը, որոնք ցրուած են

Հայաստանի, Կովկասի, Փոքր-Ասիոյ և Պօլսոյ հայ բարբառներուն մէջ, Երկրորդական նշանակութիւն ունին միայն ուղեւորներէն, լեհերէն և հունգարերէն փոխառեալ բառերը, որոնք կը գտնուին միայն Աւստրօ-Հունգարիոյ հայոց բարբառին մէջ: Մեր հաշուէն դուրս կը ֆինն գերմաներէնէ, ֆրանսերէնէ, անգլերէնէ և լատիներէնէ նոր փոխ առնուած խումբ մը բառերը, որոնք միմիայն զրական ճամբով են և հայ ժողովրդին իսպառ անծանօթ:

Գ. Դաւառական բառեր. այս անունը կուտանք բոլոր այն բառերուն, որոնք օտար լեզուէ մը փոխ առնուած չեն, հայերէն են, բայց միեւնոյն ժամանակ հին հայ մատենագրութեան մէջ աւանդուած չեն: Այս բառերը կրնան ըլլալ պարզ ու արմատական, ինչպէս Ղարաբաղոց մղակ եղուռ» կամ Վանեցոց հանգ. Շշունչ, հանգիստ» բառը. բայց կրնան ըլլալ նաեւ բուն հայերէն բառի մը բարդ կամ ածանց ձեւ. ինչպէս են ախալուսանք «աւետիք» (աչք և լոյս բառերէն՝ անք մասնիկով), լուս փիլ «նոր մութնալ նկար» (լոյս և փիլ—փիլի բառերէն են):

Ասոնցմէ դուրս կան նաեւ ուրիշ խումբ մը բառեր, որոնք կազմուած են հայ կամ դաւառական բառի մը և օտար բառի մը բարդութեամբ. ինչ. ծակ-պօղազ, գիլլա-խոբով, ցակաս-հալլուս են: Ասոնք իսկապէս կը պատկանին երրորդ խումբին, և չեն կրնար բոլորովին անշատ տարր մը համարուիլ:

Հայերէն լեզուի կառարեալ ուսումնասիրութիւնը կը պահանջէ այս երեք խումբ բառերուն մանրամասն քննութիւնը և ուսումնասիրութիւնը, հետեւեալ ձևով:

Ա. Բարբառագիտական բառարան. այս աշխատութեան մէջ պէտք է մէջ բերուին բոլոր հայ բարբառներու բուն հայերէն բառերը իրենց արդի ձևով՝ համեմատութեամբ հին հայ ձևին: Այս բառերու համեմատութիւնը և զանոնք յառաջ բերող ձայնական օրէնքներու քննութիւնը պիտի մաս կազմէ ընդհանուր հայ Զայնաբանութեան, որ հայերէն համեմատական Գերականութեան առաջին մասն է: Բարբառագիտական բառարան մը չունինք դեռ հայերէնի մէջ, այս պէտքը լրացնելու պիտի ծառայէ իմ Արմատական բառարանս, որուն մէջ իւրաքանչիւր արմատի տակ դրուած են նոյնին դաւառական ձևերը՝ 16 բարբառով և մի քանի ենթաբարբառով: Ահաւասիկ քանի մը օրինակ՝ որ կը քաղեմ նոյն անտիպ աշխատութենէս:

Աստուած—Վն. Ոգմ. աստված. Ազլ. Երե. ա'ստված. Մշ. Ալը. աստված, ասված. Ննխ. Տր. ասդված. Գոր. Ղբբ. ա'ստուծ, Տփ. ա'ստուծ, ա'ստված. Ակն. Ասլ. Խրբ. Գլ. Մշ. աստված. Վն. աստված. Զթ. ասթօս:

Բարձ.—*Խրբ. Բ'արձ'. Երև. ՆՆԽ. ՊԼ. Տփ. Բարց. Սչ. Բ'արց. Մ2. Բ'արձ. ԱԼ2. Բ'արձ'. Ասլ. փարց. ՋԹ. Բ'որձ'. Ողմ. Բ'արց. Գոր. Վն. պոռոց. Ղրբ. պիւրց. Ազլ. բորձ:*

Բերան.—*Ողմ. Բ'երան. Երև. Տփ. բե'րան. ՆՆԽ. ՊԼ. բերան. Մ2. ԱԼ2. Սչ. Խրբ. բ'երան. Ազլ. բո'րան. Վն. պերան. Ղրբ. պե'րան, պա'րան. ՋԹ. բ'իւրոն. Ասլ. փերա'ն:*

Եզն.—*Վն. յեզ, Խրբ. Սչ. յեզ, Ղրբ. Գոր. յեզ'նը, Ազլ. ի'զնը, Ասլ. յե'զ, Տփ. յի'զը, Ողմ. իզ:*

Թագաւոր.—*Խրբ. Սչ. Ազլ. ՊԼ. քափալօր, Տփ. քափալուր, քափաուր. Ասլ. քափլիկօր. ՋԹ. դ'ոգ'ալիւր. Ողմ. քոփաուր. Վն. քոփալուր, Գոր. Ղրբ. քա'վրէր:*

Բ. Օսար բառերու բառարան. այս աշխատութիւնը պիտի պարունակէ բոլոր այն բառերը, որ հայ բարբառները փոխ առած են օտար լեզուներէ. մայր ձևին և անկէ փոխառեալ հայացած ձևին համեմատութիւնը նոյնպէս երևան պիտի հանէ խումբ մը ձայնական օրէնքներ, որոնց ուսումնասիրութիւնը դարձեալ մաս պիտի կազմէ հայ Ձայնաբանութեան գիտութեան: Փոխառեալ բառերու հաւաքման գործը սկսած է մեր մէջ. էմիլեան Ազգագրական ժողովածուի խմբագրութիւնը լոյս ընծայած է արդէն «Թուրքերէնէ փոխառեալ բառեր»-ը, որ ամենէն խոշոր թիւը կը կազմէ միւս փոխառու լեզուներու համեմատութեամբ: Գործիս հեղինակը կազմած է նաև ռուսերէնէ և իտալերէնէ փոխառեալ բառերու բառարանը, որոնք տպագրութեան լոյսին կը սպասեն: Եւրոպական գրական փոխառութեանց բառարանը կազմած է Տէր-Ղազարեան (Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի, Թիֆլիս, 1908), ուր զուտ եւրոպական գրական բառերը 1500 հատ են:

Գ. Գաւառական բառարան. ասիկա պիտի պարունակէ բոլոր հայ գաւառական բառերը, ինչպէս նաև այն ձևերը՝ որոնք կազմուած են հայ և օտար բառի մը բարդութեամբ կամ ածանցմամբ: Ներկայ աշխատութիւնս կազմուած է այս նպատակով: Անցնինք ուրեմն քննել գաւառական բառարաններու պատմականը, բառերու հաւաքման ձևը և վերջապէս ներկայ աշխատութեանս կազմութեան եղանակը:

3. Գաւառական բառերով հետաքրքրուող առաջին անձը եղած է Fr. Rivola, որ հրատարակած է Dictionarium armeno-latinitum (Միլան, 1621, երկրորդ անգամ 1633), Զուդայի հայ բարբառով: Երկրորդն է Շրէօտէր, որ իր Thesaurus linguae armenicae աշխատութեան մէջ (Սմատերդամ 1711) կուտայ գաւառական բարբառով քանի մը նմոյշ (ասոնցմէ մաս մը արտատպած է Բազմալէպ 1880, 340—5 և 1881, 120—6): Երրորդն է Միլիթար

Արքա, որուն հրատարակած Հայկազեան բառարանին երրորդ հատորը (Վենետիկ 1769) «Բառգիրք յաշխարհաբանէ ի գրաբան» կը պարունակէ գաւառական բառերու ճոխ մթերք մը: Զորրորդն է Թորոսեան Պօղոս, որ ունի «Տետրակ համառօտ բառարանի» (Նոր-Նախիջևան 1794), և ուսմկօրէն անուան տակ կուտայ խումբ մը հայ գաւառական բառեր: Այս բոլորը Ժէ և ԺԸ դարերէն ըլլալով՝ ունին նաև այն առաւելութիւնը, որ կը ներկայացնեն մեղի նոյն ժամանակի բարբառները:

ԺԹ դարուն գաւառական բառերու և բարբառներու վրայ խօսող աշխատութեանց թիւը քիչ մը աւելի կը շատնայ: 1823-ին Զրպետ կը հրատարակէ իր Grammaire de la langue arménienne (Paris) աշխատութիւնը, որուն մէջ կուտայ քանի մը գաւառական բարբառներու ուրուագիծը: 1830-ին Մինաս վրդ. Բժշկեանց «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրուածքին մէջ (էջ 165—183) կը դնէ Յովսէփ Լիւպօմիրսքի լեհ իշխանին 1571 մարտ 19-ին տուած հրովարտակին ժամանակակից լեհահայ թարգմանութիւնը: 1836—7 թուերուն կը հրատարակուի Վենետիկի Նոր-Հայկազեան բառարանը՝ որ հչ միայն ամէն բառի դէմ կը դնէ նոյնին ուսմիկ ձևը, այլ և գրքին իբրև յաւելուած կուտայ 735 հայ գաւառական բառերու հաւաքածոյ մը: Ուղիղ խօսելով այս է հայ գաւառական բառարանի առաջին իսկական փորձը. նախորդները կամ իբրև բարբառներու օրինակ (բնագիր) և կամ իբրև անուղղակի կատարուած գործ (ուսմկօրէն բառեր)՝ անուղղակի կերպով կը մտնեն գաւառական բառարանագրութեան շարքը: 1843 թուի Բաղմավէպին մէջ (էջ 108—111) ունինք հայ գաւառականներու քանի մը օրինակներ: 1847-ին օտարազգի հայագէտ մը (Riggs) կը հրատարակէ A vocabulary of Words in modern armenian but not found in the ancient lexicons (Smyrne 1847): Այս նոր հայերէն բառերը՝ որոնք հին բառարաններու մէջ չեն գտնուիր և որոնց թիւը 6000 է, անշուշտ ուսմիկ, օտար փոխառեալ կամ գաւառական բառեր են. (այս հաղուագիւտ աշխատութիւնը զոր կը փնտռեմ, դեռ պատեհութիւն ունեցած չեմ տեսնելու): Նոյն թուին Բաղմավէպը (էջ 49—66) կը հրատարակէ ընդարձակ կատակերգութիւն մը (Երկուորեակը)՝ Պօլսոյ բարբառով, և 1850-ին (էջ 190—191) Շիրմազանեանցի «Պատմութիւնք ի լեզու Երևանցոց»: Նոյն իսկ հեռաւոր հայ գաւառի մը մէջ հրատարակուած չնչին թերթ մը՝ Հայրենասէր Նիկոմիդիոյ, հետաքրքրուելով հայ գաւառականներով, կը հրատարակէ Պօլսոյ բարբառով դեղեցիկ լեզու օրօրոցի» (1852, թիւ 46), զոր կ'արտատպէ նաև Բուրաստան Ս. Սահակեան (էջ 105—6): Նոյն 1852 թուին Գ. Ալվէրդեան լոյս կ'ըն-

ծայէ պատուական գործ մը՝ Սայեաթ-Նովայի երգերը՝ Թիֆլիսի բարբառով, գաւառական բառերու բացատրութեամբ և քերականութեամբ:

Ասկէ յետոյ հղած աշխատութիւնները խիստ շատ են: Սկըսեալ 80-ական թուականներէն՝ գաւառական կեանքի ուսումնասիրութեան, ազգագրագիտութեան և բարբառագիտութեան ասուան տակ՝ յօդուածներու, ժողովրդական երգերու, ուսումնասիրութիւններու, գաւառական հաւաքածոներու և բառացուցակներու ծով մէջ որ կը թափի օրաթերթերու, հանդէսներու և առանձին հատորներու մէջ: Նոյն իսկ կ'սկսին առանձին թերթեր՝ Բիւրակն և Ազգագրական Հանդէս, և էմիլեան Ազգագրական ժողովածուն, որ նպատակ կը դնեն հայ գաւառական կեանքի ու բարբառներու ուսումնասիրութիւնը: Աւելորդ կը համարիմ այս ամբողջ շրջանին մէջ հրատարակուած յօդուածներու և գրքերու ցանկը տալ հոս, որովհետեւ, ինչպէս ըսի, անոնց թիւը խիստ մեծ է: Իմ պատրաստած Հայագիտական Մատենագիտութեան մէջ արդէն հաւաքած եմ 1500 անուն, որ յուսով եմ օր մը՝ դեռ աւելի ընդարձակելով՝ լոյս ընծայել:

4. Ինչպէս կազմուած են վերի բառացանկերը և ինչպէս պէտք է կազմել գաւառական բառարան մը.— Քիչ մը վերը՝ հայ բարբառներու տարրերը երեքի բաժնելով (բնիկ, օտար և գաւառական բառեր) և իւրաքանչիւրին բաժինը որոշելով՝ ըսինք թէ գաւառական բառարանին գործն է լոկ գաւառական բառերը: Ըստ այսմ՝ մեր կարծիքով հոս գոյութիւն ունենալու չեն ո՛ր օտար բառերը և ո՛չ ալ բնիկ հայ բառերը, ինչքան ալ աղաւաղուած ձևի տակ ներկայանան անոնք և ինչքան ալ հազուադիւս գրաբար բառ մը ներկայացնեն. օր. ալիւմամու, յական քօթափել և այլն: Վերի բառացանկերուն մէջ այս կարգի բառեր գտնել շատ սովորական է, բայց հարկաւ անոր համար որ հեղինակները նպատակ ունեցած չեն զուտ գաւառական բառարան մը տալ, այլ ներկայացնել որևէ բարբառի մը պարունակած դժուարիմաց բառերը ընդհանրապէս:

Սակայն գաւառական բառ մը միայն մէկ բարբառի յատուկ չէ, այլ շատ անգամ շատ բարբառներու մէջ գոյութիւն ունի. օրինակի համար աղիկ բառը, որ գտնէ 29 գաւառականի մէջ կայ. այսպէս Ագուլիս, Ակն, Ասլանբէգ, Արաբիլի, Եղդուկի, Խոյ, Խիզան, Խլաթ, Խոտըջուր, Խրիմ, Կիւրին, Կէյվէ, Կեսարիա, Հագրօ, Հունգարահայք, Մալաթիա, Մուշ, Մարաշ, Մարսուան, Նիկոմիդիա, Նոր-Նախիջևան, Շատախ, Պօլիս, Պարտիզակ, Սուչա-

վա, Սիմիրհիսար, Վան, Տիգրանակերտ, Քղի, Այսպէս հասկնալ նաև ուրիշ շատ բառերու համար:

Բայց բառ մը՝ որ այս կամ այն դաւառականներուն մէջ կը գտնուի, միշտ միևնոյն ձևը չունի. այլ տեղ մը մէկ տեսակ, ուրիշ տեղ ուրիշ տեսակ հնչում կամ ձև ունի: Ահաւասիկ չորս իրարմէ բարդ օրինակներ.

1. Ունինք «հեղ, անգամ» նշանակութեամբ բառ մը, որ հետեւալ ձևերն ունի, Դավրէժ, Մարաղա, Շատախ, Վան՝ *սիր*, Տրապիզոն՝ *դիր*, Մուշ, Նոր-Բայազէտ՝ *դիր*:

2. Տփղիսեցիք կը գործածեն ծիս բառ մը՝ որ կը նշանակէ «20 կոպէկանոց», ասոր հետ հարկաւ նոյն են Դարաբաղցոց ծիս և Ագուլեցոց ծայս բառերը՝ որոնք կը նշանակեն «5 կոպէկանոց»:

3. Զէյթունցիք ունին քափձ՝ըն, քափցըն և Մարաշցիք քափձան ձև մը «սկաւառակ» նշանակութեամբ, որոնք ի հարկէ նոյն բառերն են:

4. Խիան, Կարին, Մուշ ունին *k'suos* «յատոց, ճիւղ կտրելու դանակ» բառը, որուն դէմ Զէյթունի մէջ կը գտնենք *gũsũs* ձևը:

Արդ՝ այս կրկնակ, եռակ, քառակ և աւելի ձևերէն որքանցունելու է գաւառական բառարանին մէջ. եթէ ամենքն ալ անցնենք, այն ժամանակ ոչ միայն աշխատութիւնը 3—4 անգամ կ'ընդարձակուի, այլ և ընդհանուր խառնակութիւն մը կը տիրէ և գիտութիւնը բան մը ըսած չ'ըլլար:

Ըստ իս գաւառական բառարանին մեջ պիտի անցնի այն նախնական մայր ձեւը, որ այլայլուելով կամ փոփոխուելով զանազան գաւառականներու մեջ յառաջ բերեւ է զանազան ձեւեր:

Քննենք վերի օրինակները առանձինն:

Առաջին օրինակին համար նկատենք, որ հայերէնի բ, գ, դ, ձ, շ ձայները Դավրէժի, Մարաղայի, Շատախի, Վանի գաւառականներուն մէջ կը դառնան *ս*. Մուշի, Նոր-Բայազէտի գաւառականներուն մէջ կ'ըլլան բ՝ գ՝ դ՝ ձ՝ (*bh, gh, dh, jh, jh*), իսկ Տրապիզոն, Նոր-Նախիջևան, Պօլիս ևն կը ֆնան բ, գ, դ, ձ, շ, (*b, g, d, j, j*). Այս օրէնքներուն համաձայն վերիններուն մայր ձևը կրնայ դիր միայն ըլլալ, որ կուտայ Դվ. Մրդ. Շտ. Վն. *սիր* (*դ>ս*), Տրապիզոն դիր (*դ>դ*) և Մշ. Նբ. դիր (*դ>դ*): Ասոր տեղ չենք կրնար ենթադրել *քիր, որովհետև ասիկա ամէն տեղ պիտի տար քիր, և ոչ ալ *սիր*, որ թէև պիտի դառնար իրօք նոյնպէս Դվ. Մրդ. Շտ. Վն. *սիր* և Տր. դիր, բայց սակայն Մշ. Նբ. *սիր*:

Երկրորդ օրինակի մէջ մայր ձևն է ծիս: Գիտենք որ Դարաբաղի բարբառը սովորութիւն ունի շեշտեալ ի ձայնը դարձնելու ե. օր. *ֆիթ>էթ*, դեղին>*սէ*՝դէն, գարի>*կի*՝օրէ ևն. Ագուլիսի բար-

բառը նոյն ի ձայնը կը դարձնէ այ. օր. միս>մայս, ճիւն>նայն, փիթ>փայնք, ինն>այնք, ծիծաղ>ծայծող ևն. իսկ Տփղիսի բարբառը ի ձայնը անփոփոխ կը պահէ. ինչ. փիթ>փինք, միս>միս ևն. Ուրեմն Տփ. ծիս=Ղբբ. ծիս=Ագլ. ծայս՝ բոլորը միասին մատնացոյց կընեն նախնական հասարակաց ծիս ձևը:

Երրորդ օրինակին մէջ շփոթութեան տեղիք տուող ձայներն են նախ ծ—ձ—ց և երկրորդ ր—ա: Առաջինը չկրնար ըլլալ ոչ ծ և ոչ ց, որովհետեւ ասոնք թէ Զէյթունի և թէ Մարաշի մէջ պիտի դառնային հաւասարապէս ձ և ց. այլ նախաձէն է ձ՝ որ իբօք Զէյթունի մէջ կ'ըլլայ ձ՝ (և երբեմն ց), Մարաշի մէջ ձ: Ո՛րն է ձայնաւորին նախամայրը, ասիկա անշուշտ չէ ա, (որ կ'ըլլայ օ), չէ է (որ կ'ըլլայ է, ի), ոչ ալ ո, օ (որ կուտան էօ ևն): Նախաձէն է ի, որ ըստ օրինի կը դառնայ Զթ. ր և Մրշ. ա. հմմտ. կնիկ>Զթ. կըրկ, Մրշ. կնակ: Բառին նախաձէն է ուրեմն քալիփօն:

Չորրորդ օրինակին մէջ լուծելու խնդիրներն են. նախ թէ ինչ էր առաջին բաղաձայնը, երկրորդ՝ կա՞յ առաջին վանկին մէջ ձայնաւոր, և երրորդ՝ ինչ է երկրորդ ձայնաւորը:—Առաջին բաղաձայնը կրնայ ըլլալ միայն կ. ասիկա Զէյթունի մէջ կ'ըլլայ ց (gūsūs), իսկ Ե-ի քով կը դառնայ ֆ. ինչ. կօխֆ>կօխֆ. Զէյթունի մէջ իւ ձայնաւորով բաժնուած ըլլալով Ե-էն՝ նոյն փոփոխութիւնը տեղի ունեցած չէ: Զենք կրնար դնել գ, որովհետեւ այս ձայնը Զթ. Կր. Մշ. հաւասարապէս կուտայ gh (գ՝). ոչ ալ ֆ, որուն թէև համաձայն կուգան խն. Կր. Մշ., բայց Զթ. ց հաւատակ կը կանգնի: Առաջին վանկին ձայնաւորը վերջէն աւելցուած է. Կիլիկիոյ բարբառը (Զթ. Մրշ. ևն) կը սիրէ առաջին վանկին ր ձայնին տեղ ներմուծել բառին շեշտեալ ձայնաւորը. օր. Զթ. գնաց > ghonoc, քսան>k'oson, կնկան>gongon, Մրշ. Քրիստոս>K'ürüsdüs ևն. եթէ այս ձայնաւորը նախապէս գոյութիւն ունենար, պիտի գտնէինք զայն նաև խն. Կր. Մշ. ձևերուն մէջ, որոնք սովորութիւն չունին բառին առաջին վանկին ձայնաւորը ջնջելու: Երկրորդ վանկին ձայնաւորն է ո. Զէյթունի իւ ձայնը կրնայ ծագիլ գրբ. ո, ու, ոյ ձևերէն. բայց թէ ու և թէ ոյ պիտի դառնային խն. Կր. Մշ. ու և ոչ իւ, ուստի յարմար չեն. յարմար չէ նոյն իսկ օ ձայնը, որովհետեւ խն. Կր. Մշ. գիտեն գաւազանել ո և օ՝ առաջինը դարձնելով ոօ, երկրորդը պարզապէս օ: Ըստ այսմ բառին նախաձէն է կօն:

Այսպէս ուրեմն իւրաքանչիւր բառի համար հարկաւոր է ընել համեմատական քննութիւն մը և այս քննութեամբ վերականգնել նախաձևը, ճիշտ ինչպէս ընդհանուր լեզուաբանութեան մէջ կընենք նախալեզուական ձևը գտնելու համար, կամ ինչպէս բանա-

սէր մը կը քննէ զանազան ձեռագիրներ՝ նախնական բնագիրը վերականգնելու համար:

Շատ անգամ կը պատահի, որ բարբառային ձև մը՝ միայն մէկ տեղ կը գտնուի և համեմատութեան եղբներ չ'ունենար. այս պարագային նախաձեռն վերականգնելու համար պիտի օգտուինք բառին ստուգաբանութիւնէն և այն ընդհանուր ձայնական օրէնքներէն՝ որ նոյն բարբառին յատուկ են: Օր. Ղըր. ԲՈՒՐԱԳՈՒԿՈՒՔ՝ «վայրի զկեռի թուփ» յայտնապէս կազմուած է ԲՈՒ և զկեռ բառերէն և նախաձեռն է ԲՈՒԱԳԿԵՐԻ, ի ձայնը ըստ օրինի դարձած է Ի (շեշտով). շեշտէն առաջ գտնուած ձայնաւորները նախ վերածուած են Ը-ի, բայց որովհետեւ այս ձայնաւորներէն մէկը ո է, ուստի նոյն Ը-երը դարձած են ՈՒ, այսպէսով ձևացած է ԲՈՒՐԱԳՈՒԿՈՒՔ:

Բոլոր այս պարագաներուն ի նկատի առնելու է և հայերէնի ընդհանուր ուղղագրական օրէնքները և ըստ այնմ ուղղագրելու նախաձեռնը. օր. թէ հայերէնի մէջ բառավերջին կը գրուի ալ, ոյ (Բահանայ, յեզոյ), թէ բառին մարմնին մէջ չկրնար գտնուիլ Է (գեղեցիկ), թէ երկու ձայնաւորի մէջ Վ ձայնը կը գրուի ւ, բաղաձայնէ յետոյ ՈՒ (աւագան, Երուսնդ), թէ ր, ղ ձայններէն յետոյ կուգայ ձ, ջ (որձ, աղջիկ, բաղձնիք) և այլ այսպիսի բաղմամբիւ օրէնքներ, որոնք սովորական են մեր լեզուին:

Բայց ինչպէս ձեռք բերելու է այն օրէնքները, որոնք յառաջ բերած են յիշեալ ձայնական փոփոխութիւնները մեր զանազան գաւառականներուն մէջ: Ասոր համար մեր միակ ուղիղ առաջնորդը գաւառականներու մէջ գտնուած բուն հայերէն բառերն են և այս բառերուն քննութեամբ ահա երևան պիտի հանուին յիշեալ ձայնական օրէնքները: Այս գործը՝ որ հայ բարբառախօսութիւն անուան տակ՝ առանձին մաս մը կը կաղմէ հայ լեզուաբանութեան մէջ, դեռ նոր է սկսած մեր մէջ, Կան քանի մը բարբառներ, որոնք պէտք եղած չափով քննուած են. այսպէս օր. Թիֆլիզի, Աղուլիսի, Մուշի, Վանի, Եւդոկիոյ, Ախալցխայի, Արարկիլի, Ղարաբաղի, Սուչավայի գաւառականները են. բայց միւսները դեռ կը ֆնան առանց քննութեան: Գործիս հեղինակը պատրաստած ըլլալով խումբ մը ուրիշ բարբառներու վրայ առանձին դեռ սնտիպ քննութիւններ (որոնք են Համշէնի, Կարնոյ, Խարբերդի, Պօլսոյ, Ողմիի, Զէյթունի, Մարաղայի, Նոր-Նախիջևանի), յարմարութիւն ունէր պէտք եղած չափով օգտուելու անոնցմէ, որով գաւառական բառերու համեմատական վերականգնումը շատ դիւրացած է:

Ընթերցողներուս տալու համար փոքրիկ առաջնորդ մը՝

հարկ կը համարիմ զնեւ հոս հայ բարբառներու ընդհանուր Ձայնախօսութեան և Ձայնաբանութեան համառօտ ուրուագիծ մը:

5. Նոր հայերէնի 31 բարբառներու Ձայնական դրութիւնը շատ հարուստ է համեմատութեամբ հնին. եթէ հաւաքենք ասոնց մէջ գտնուած բոլոր ձայները, կը գտնենք ընդամենը 74 ձայն, որոնք կը բաժնուին հետեւեալ ձևով:

Ա. Ձայնատրոններ (14 հատ):

ա = a.

մ = ā (ա և ե ձայներուն միջին աստիճանն է. կը գտնուի Ղրբ. Ազլ. Կր. Վն. Խրբ. Զթ. Հճ. Մրշ. Արբ. Ասլ. Մրղ.):

ա̇ = a (ոնգային ա. ունի միայն Ասլ.):

է = e.

է' = è (շատ բաց ե. ունի միայն Ասլ.):

ը = ə:

ը' — ոռւ. Ե (Թանձր ը. ունին միայն Ղրբ. և Մրղ.):

ըէ — կը գտնուի այս երկու ձայներուն մէջտեղը. ունին Ղրբ. Մրղ.:

ի — i.

օ — o.

ու — u.

էօ — ծ. կը գտնուի Ղրբ. Ազլ. Վն. Ծհ. Զթ. Հճ. Մրշ. Ազն. Ասլ. Պլ. Ննխ. և Մրղ.:

ն — ծ. տեսակ մը բաց եօ, որ ունի միայն Վն.:

իւ — ü. կը գտնուի Ղրբ. Ազլ. Վն. Հմշ. Զթ. Հճ. Մրշ. Ազն. Ասլ. Պլ. Ննխ. և Մրղ.:

Բ. Երկբարբառներ (17 հատ):

աւ — au. Ասորիք, Սուչավա:

աը — aə. Ասորիք:

այ — aī. Ասորիք, Անտիոք:

ե — ie. Կարին, Մուշ, Վան, Անտիոք, Սեբ, Մշ.:

էյ — eī. Ղրբ. Անտ. Ասորիք:

ըյ — əi. Մրղ.:

իու — iu. Մշ.

իյ — iy. Անտ.

իը — iə Մշ.:

ե — ieu. Մշ.:

ո — ūo. Կր. Մշ. Վն. Սեբ.:

ուա — ua. Ղրբ. Աս.

ուէ — uē. Եւդ. Մրղ.:

ուի — uī. Մրղ.:

օւ — ou. Մշ.:

օը — ōə. Անտ.:

օյ — oī. Ղրբ.

Գ. Բաղաձայններ (43 հատ).

բ — b.

բ' — bh (sonore aspirée) Երև. Կր.

Մշ. Խրբ. Զթ. Հճ. Արբ. Ազն. Սեբ.:

դ — g	մ — m.
դ' — gh հմմտ. բ'.	յ — y.
դյ — gy. Ղբբ. Ազլ. Վն. Խբբ. Մբղ.	ծ — h-էն աւելի տկար շունչ մէ.
դ — d.	Մ2. Ալ2.
դ' — dh. հմմտ. բ'.	ն — n.
զ — z.	շ — š.
թ — t'.	չ — č.
ժ — z.	պ — p.
լ — l.	ջ — ĵ.
լ — l (աւելի թանձր քան նա-	ջ' — ĵh. հմմտ. բ'.
խորդը). Ասլ.	ռ — r.
խ — x.	ս — s.
ծ — c.	վ — v.
կ — k.	տ — t.
կյ — ky. Ղբբ. Ազլ. Վն. Մբղ.	ր — r.
հ — h.	ց — c.
հյ — hy. Ղբբ. Վն. Մբղ.	ւ — w (Անզլ. w-ի պէս տկար v
ձ — j.	մը, որ ունին Հղ. Մբղ.):
ձ' — jh. հմմտ. բ'.	փ — p'.
չ — č.	ք — k'.
չ' — ċ կամ q (աւելի կոկորդային	ք' — k'y Ղբբ. Ազլ. Վն. Խբբ.
քան ղ). Տփ.	Մբղ.
ճ — č.	ֆ — f.

Անցնինք տեսնել թէ այս ձայները գրաբար որ ձայներուն
կը համապատասխանեն կամ թէ գրաբարի ձայները ինչ փոփո-
խութեանց կենթարկուին հայ բարբառներու մէջ:

Ա. ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐ

ա.—Այս ձայնը սովորաբար կը ֆայ ա. կը ճիւղի բարբառ-
ներուն մէջ միջին վանկերու ա-ը կը ջնջուի կամ ը կը դառնայ.
Ղբբ. Շմ. Ազլ. Վն. Զթ. Մբղ. Աբբ. Ասլ. Մբղ. շատ անգամ կը դառ-
նայ ա, որուն համար որոշ կանոններ գտնել դժուար է. յաջորդ
ն-ի քով բնականաբար կ'ստանայ ռնպային գոյն, որ շատ զօրա-
ւոր է Ասլ. ուր կը դառնայ պարզ և որոշ ա. Հմշ. Զթ. Մբղ. Ակն.
նոյն ն ձայնին քով կ'ըլլայ օ, իսկ Ազլ. ու. Ասլանբէկի գաւա-
ռականին մէջ երբ ն-ին կը յաջորդէ բաղաձայն, ա կը դառնայ
ko. երբ կը յաջորդէ ու կամ օ, կ'ըլլայ ա > ք. իսկ երբ կը յաջոր-
դէ r, կ'ըլլայ ա > օ: Կիւրկիւր և Ազլ. շնչաւի տակ կը դառնայ օ.

առանց շեշտի ա կամ ու. Սիւրբիոյ բարբառով կը դառնայ ու. Ղրբ. Շմ. Ազլ. քանի մը մասնաւոր դէպքերու մէջ կ'ըլլայ նաեւ է, իսկ Ազլ. Կօ, ալ, իւ:

Ե. — Միւսմանկ բառերու սկիզբը կ'ըլլայ Մ₂. Վն. յե. միւսնեւրուն մէջ յէ կամ Է. Տփ. յի. Ազլ. Ջթ. Մլթ. ի: Բաղմավանկ բառերու սկիզբը կ'ըլլայ յէ կամ Է. Ազլ. Մլթ. Ջթ. Տփ. ի. բառի մէջ սովորաբար է կը հնչուի. Ասլ. կը դառնայ շատ բաց Է. Ղրբ. Շմ. Մրդ. կը դառնայ Է, քէ, ի. Ջթ. Մր₂. Մլթ. Տիգ. Վն. կ'ըլլայ Է, ի. Ազլ. ի, Է, ու, ա: Բառին վերջին վանկին մէջ Կր. Մ₂. Վն. Սեբ. Սչ. կը դարձնեն Է (ie), միւսները Է. Տփ. Տիգ. Սիւրբա ի. Ղրբ. Մրդ. Է, քէ, ի. Ազլ. ի, Է, ա, ու, Մլթ. ա, ի. Ջթ. Հճ. Մր₂. Է, ի:

Է. — Գրեթէ բոլոր բարբառներու մէջ կը ֆնայ Է. Ղրբ. Շմ. կ'ըլլայ Է, քէ, ի. Ազլ. Է, Կլ, ի, ա, ալ. Ասլ. կը հնչուի շատ բաց Է:

ԴԻՏ. — Այսպէսով՝ Կր. Մ₂. Վն. Սեբ. Սչ. զանազանելով Է և Է հնչումները, կուտան մեզ թանկագին միջոց մը՝ որոշելու այս ձայնաւորներուն նախնական ձևը:

Բ. — Ամէն տեղ կը ֆնայ Բ. Ղրբ. կը դառնայ երբեմն Թաւ Ը. Տիգ. ք, Է. Սիւրբա ա:

Ի. — Սովորական ձևը ի է. Ղրբ. և Շմ. կ'ըլլայ ի, Է, քէ. Ազլ. ի, ալ, ա, ու. Վն. ի, Է. Ջթ. ի, Է, ք. Մր₂. ա. Սիւրբա Կլ, Սչ. ի, իբ. Մրդ. ի, քի, ք:

Ո. — Միւսմանկ բառերու սկիզբը Մ₂. Վն. վո, Տփ. վու, Ղրբ. վրէ, Երև. վօ, Մրդ. վրի, Ազլ. ու. բաղմավանկներուն սկիզբը Երև. Մ₂. Վն. վօ, Մրդ. վրի, Տփ. վու, Ղրբ. վրէ. Ազլ. ու, Է. Ակն. Ասլ. Կօ. Ջթ. Հճ. Մր₂. օ, ու, իւ, միւսները օ: Բառին մէջ առհասարակ օ է. Ղրբ. օ, Կօ, ու (իսկ վ ձայնէն յետոյ վրէ). Ազլ. ու, իւ, Է, ու, ա. Վն. ո, օ, ու, Շհ. Կօ, Ջթ. Մր₂. օ, ու, իւ. Ակն. Ասլ. Կօ, Եւդ. ուէ. Մրդ. օ, Կօ, քլ, ուլ, ուէ: Վերջին վանկին մէջ Կր. Մ₂. Վն. Սեբ. կ'ըլլայ ո. միւսներուն մէջ սովորաբար օ. Տփ. Տիգ. ու. Ազլ. ու, իւ, Է, ու, ա. Վն. նաեւ Կօ, ո, ու, Շհ. Ակն. Ասլ. Կօ, Հմ₂. օ, իւ. Ջթ. Հճ. Մր₂. օ, ու, իւ. Եւդ. ուէ. Մրդ. օ, Կօ, քլ, ուլ, ուէ:

ԴԻՏ. — Կր. Մ₂. Վն. Սեբ. զանազանելով ո և օ ձայները, կուտան մեզ անգնահատելի միջոց մը՝ անոնց ուղղագրութիւնը որոշելու համար, ինչ որ անկարելի պիտի ըլլար հայերէնի վրայ ունեցած մեր այլ միջոցներով:

Ու. — Շատերուն մէջ կը պահուի ու. բայց միւսներուն մէջ կ'ստանայ զանազան ձևեր. այսպէս՝ Ղրբ. Շմ. ու, օ, իւ, Կօ. Ազլ.

ու, իւ, Է, օ, Վն. ու, իւ, ՏԻԳ. ո, ՄԼԹ. օ, ԶԹ. օ, իւ, ՍԻւրԻա
աւ, Ակն. Ասլ. իւ, Մրդ. ու, ույ, իւ:

Բ. ԵՐԿԻՐԱՐԲԱՌՆԵՐ.

Գրաբարի երկբարբառները նոր հայերէն բարբառներու մէջ
ամենամեծ մասամբ պարզուած և վերածուած են կամ միակ ձայ-
նաւորի մը և կամ ձայնաւորէ ու բաղաձայնէ բաղկացած խում-
բերու: Առաջիններուն մէջ նկատելի են այ, ոյ, իւ:

այ.—Կը դառնայ սովորաբար Է կամ ա. Է ձեն ունին Երկ.
Տփ. Ղրբ. Շմ. Զդ. Մշ. Վն. ՏԻԳ. Հմշ. Մրշ. Արդ. ա. ձեն ունին
Կր. Արբ. Ակն. Սեբ. Եւդ. Պլ. Դ. Ննխ. Սշ. անոնցմէ դուրս ու
կը գտնենք Խրբ. ԶԹ. երբեմն ա և երբեմն Է ունին Ասլ. ՄԼԹ. իսկ
Ազլ. ունի այ, ա:

Դիւ.—Ըստ այսմ բարբառներէն դրեթէ ոչ մէկը պահած է
այ ձայնը. այնպէս որ երկբարբառին նախաձևը որոշելու համար
պէտք է անպատճառ ունենալ երկու տարբեր ձայնափոխութեանց
օրինակներ:

ոյ.—Ո՛չ մէկ բարբառով մէջ անաղարտ պահուած չէ. Տփ. Կր.
Մշ. Հմշ. Արբ. Ակն. Սեբ. Եւդ. Պլ. Ննխ. Սշ. կը դարձնեն ու,
Ղրբ. Շմ. Ազլ. Ասլ. կը դարձնեն իւ, Երկ. ի. Վն. ո, ո, ու, Խրբ.
ՄԼԹ. օ, ԶԹ. Մրշ. իւ, ի, Մրդ. իւ, ույ:

իւ.—Այս երկբարբառը միավանկ իւ ձայնաւորին վերածուած
է Ղրբ. Շմ. Ասլ. բարբառներուն մէջ. Տփ. Զդ. Կր. Մշ. Հմշ. Արբ.
Ակն. Սեբ. Եւդ. Պլ. Ննխ. Սշ. դարձուցած են ու. Երկ. Խրբ. ի.
Վն. ու, իւ, ՄԼԹ. ի, օ, ԶԹ. Մրշ. ի, ր, Է, Մրդ. իւ, ի:

ԴիՏ.—Ինչպէս կը տեսնուի, գրաբարի ու, ոյ, իւ ձայները
բարբառներուն մէջ դրեթէ միևնոյն վիճակին հասած են. այս-
պէս Տփ. Կր. Մշ. Հմշ. Արբ. Սեբ. Եւդ. Պլ. Ննխ. Սշ. երեքն
ալ դարձուցած են ու. Ասլ. բոլորն ալ ըրած է իւ. միւսներուն
մէջ եղած զանազանութիւնները մասնական դէպքեր են. ամենէն
լաւ կը զանազանէ Երկ. որ գոնէ ու կը պահէ ու, իսկ ոյ, իւ կը
դարձնէ իւ Բարբառային ու, իւ ձայները ճշգրիտ համար ուրեմն
հարկաւոր է առանձին զգուշաւորութիւն:

Գրաբարի միւս երկբարբառներն են աւ, եւ, եւա, ուա.

Այս ձայները վերածուելով պարզ ձայնաւորներու կամ բա-
ղաձայնէ ու ձայնաւորէ բաղկացած խումբերու (աւ > օ, ալ,
եւ > ե, եւ > էլ, եւա > էլ, ուլ > ուլ, օլ, ուա > վա), ենթարկուած
են այն փոփոխութեանց՝ որոնք յատուկ են իրենց կազմիչ ձայ-
ներուն՝ իւրաքանչիւր բարբառի մէջ. այսպէս աւ ձայնը օ դառ-

նալէ յետոյ, այլ ևս ապրած է իբրև բառավերջի ո, (բացի Կր. Մշ. Վն. Սեբ.), ենթարկուելով ասոր յատուկ փոփոխութեանց. նոյնպէս նաև ալ, ե, իլ եւ. Ղըբ. ով կը դարձնէ ալ, և ուա կը պահէ իբր երկբարբառ ուա: Սուշավայի բարբառը բառին վերջը անփոփոխ կը պահէ աւ, եւ, բայց բառի մէջ նոյնպէս կը դարձնէ ալ, իլ:

Ընդհանուր օրէնքով Ազլ. Ղըբ. և Շմ. շեշտը տեղափոխելով բառին վերջնութիւն վանկին վրայ, ասկէ առաջ դառնուած բոլոր ձայնաւորները կը ջնջեն կամ ք-ի կը վերածեն. այս բանը երբեմն բառը անճանաչելի վիճակի մը կը վերածէ: Ընդհակառակը Կիւիկիոյ բարբառը (Ձթ. Հճ. Մըշ.) բառին առաջին վանկերուն ձայնաւորները կ'աշխատի վերածել վերջին շեշտեալ ձայնաւորին, ինչ որ ալ ըլլայ անոնց ծագումը:

Գ. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ.

Գրաբարի բաղաձայններուն մէջ ամենէն աւելի փոփոխութեանց ենթարկուած են ք, գ, դ, ձ, ջ—պ, կ, ս, ծ, ճ—փ, ֆ, ք, ց, չ խումբերը: Առաջին խումբը Տփ. Ջղ. Ազլ. Տը. Հմշ. Մըշ. Սիւրիա, Եւդ. Ասլ. Պլ. Ննխ. Արդ. պահած են իբր ք, գ, դ, ձ, ջ (b, g, d, j, j'). Երև. Կր. Մշ. Տիգ. Խրբ. Շհ. Ձթ. Արբ. Ակն. Սեբ. Սչ. դարձուցած են bh, gh, dh. jh, jh (դոր կը նշանակենք հայ տառերով ք', գ', դ', ձ', ջ'). Ղըբ. Վն. Մըղ. դարձուցած են պ, կ, ս, ծ, ճ (p, k, t, c, c'), իսկ Մլթ. Դ. դարձուցած են փ, ֆ, ք, ց, չ—երկրորդ խումբը Երև. Տփ. Ղըբ. Շմ. Ջղ. Ազլ. Մշ. Վն. Տիգ. Մըղ. Արդ. պահած են իբր պ, կ, ս, ծ, ճ. իսկ Կր. Խրբ. Շհ. Տը. Հմշ. Մլթ. Ձթ. Մըշ. Սիւրիա, Արբ. Ակն. Սեբ. Եւդ. Ասլ. Պլ. Դ. Ննխ. Սչ. դարձուցած են ք, գ, դ, ձ, ջ (b, g, d...):—Երրորդ խումբը ամէն տեղ ալ պահուած է անփոփոխ: Ասոնցմէ դուրս եղած դէպքերը յիշեալ ձայններուն մէջ մասնաւոր դէպքեր են, որոնցմէ յիշատակելի այն որ ռնգային ձայններուն յաջորդող խուլերը (երկրորդ խումբ) կը դառնան թըրթռուն (առաջին խումբ):

ԴիՏ.—Հայ բարբառներուն մէջ յիշեալ բաղաձայններուն երեք աստիճանները պահած են ու կը զանազանին միայն Երև. Տփ. Ջղ. Ազլ. Կր. Մշ. Տիգ. Խրբ. Շհ. Ձթ. Արբ. Ակն. Սեբ. Սչ. Արդ. ներկայացնելով կամ ք, պ, փ և կամ ք'. ք, փ շարք մը: Իսկ միւսները առաջին կամ երկրորդ խումբը ջնջելով կը զանազանեն միայն երկու շարք պ, փ կամ ք, փ: Այս բարբառներն են Ղըբ. Շմ. Վն. Տը. Հմշ. Մլթ. Մըշ. Սիւրիա, Եւդ. Ասլ. Պլ. Դ.

Ննիւ. Մրդ. Էեռեաբար միայն այս վերջին բարբառներով եղած դաւառական ձեռք մը հնչումը չկրնար վստահելի ըլլալ և անոր ուղղագրութիւնը ստուգելու համար անպատճառ պէտք կայ նախորդ (երեք աստիճանները ճանչցող) բարբառներէն մէկուն օգնութեան:

Միւս բաղաձայններուն մէջ նկատելի են.

գ, կ, ք, — Դրբ. Խրբ. Վն. Մրդ. կը դարձնեն շատ անգամ գյ, կյ, քյ, հյ, մանաւանդ Է, ի ձայներէն յետոյ. բայց այս փոփոխութիւնը միայն յիշեալ ձայններուն յատուկ լինելով՝ նախնականը վերականգնել շատ դիւրին է: Գ, կ ձայները և ռնգականէն յետոյ՝ բաղաձայնէ առաջ կը դառնայ յ՝ Դրբ. Ասլ. Պլ. Էն:

Հ. — Ամեն տեղ կը ֆնայ և, բայց Զդ. Դվ. Նբ. Մշոյ հիւսիսային շրջանը, Վն. Խոյ, Սլմ. Որմ. Մրդ. կը դառնայ խ. ուստի այս բարբառներուն մէջ գտնուած խ ձայնը անպատճառ պէտք է ստուգել կամ ստուգաբանութեամբ և կամ վերոյիշեալներէն դուրս գտնուած ուրիշ բարբառով մը: Նոյն ձայնը ու-ի քով Երև. Կր. կը վերածեն ֆ, Դրբ. Վ, միւսները կը պահեն: Դրբ. Շմ. Ագլ. շատ անգամ բառին սկիզբը կ'աւելցնեն աւելորդ և, որ ուրիշ բարբառներու մէջ չի գտնուիր:

Բ. — Տեղ տեղ ուրիշ ձայներու հետ կը շփոթի. ինչպէս Վն. Տփ. ու-ի հետ, Զթ. յ-ի հետ, Հմշ. յ կամ օ ձայններուն հետ, Ննիւ. Հճ. երբեմն օ ձայնին հետ: Ուրիշ տեղեր, մանաւանդ շշականներու քով կը կորսուի: Ասոնք ալ կամ ստուգաբանութեամբ և կամ ուրիշ բարբառի մը օգնութեամբ ստուգելու է:

Տ. — Երև. Խրբ. Մն. Դրբ. կը վերածեն և, երբ գտնուի յաջորդական և ձայնէն անմիջապէս առաջ:

Ղ. — Կը վերածուի խ ձայնին՝ երբ իրեն խուլ կամ թաւ բաղաձայն մը յաջորդէ. այս օրէնքը բոլոր բարբառներուն ընդհանուր է. ուստի ուղղագրութեան համար մեր միակ առաջնորդը ստուգաբանութիւնն է: Պլ. Ննիւ. բառին սկիզբը կը դառնայ նոյնպէս խ:

Խ. — Ագուլիսի մէջ շատ անգամ, երբեմն ալ Երև. կը դառնայ և, որ ուրիշներու մէջ անփոփոխ կը ֆնայ:

Ս. — Կը ջնջուի ալ և օ ձայներէն առաջ՝ Խարբերդի բարբառին մէջ:

Ն, շ, չ և ծ, ձ, ց ձայները շատ տեղ բաղաձայնէ առաջ կորսնցնելով իրենց ատամնականը, կ'ըլլան պարզապէս ծ, ց, զ, ս. այս օրէնքը լիակատար գործադրութեան հասած է Ասլ. սահմանափակ չափով ունին Պլ. Դրբ.:

Վերոյիշեալ ձայնափոխութիւնները կանոնաւորապէս դասա-

ւորած կը ներկայացնենք հետեւեալ տախտակին մէջ. Տախտակին վերը դրուած են գրաբարի ձայները, որոնք որ հիմնական փոփոխութեանց կ'ենթարկուին. իսկ ձախ կողմը կարգով շարուած են հայերէնի 31 բարբառները և անոնց դէմ համապատասխան ձայնափոխութիւնները: Ուր որ բան մը նշանակուած չէ, մեր ծանօթութեան սահմանէն դուրս կը մնան:

6. Գաւառական բառարանիս կազմութեան սկսած եմ 1890 թուին, երբ դեռ աշակերտ էի Պօլսոյ ազգ. կեդրոնական վարժարանին մէջ, իմ առաջին առաջնորդս եղած է Պօլսոյ բարբառով քանի մը հարիւր բառերու փոքրիկ հաւաքածոյ մը՝ որ կազմած էր պր. Արշակ Զօպանեան: Այս բառատետրը ամբողջապէս արտագրելով՝ սկսած եմ շարունակ նորանոր բառեր աւելցնել, հաւաքելով անձամբ գաւառացի հայոց բերնէն ու գրքերէ: 1892—3 թուերուն ինձ մեծապէս նպաստած են գաւառացի դասընկերներս՝ օր օրի հայթայթելով ինձ իրենց բարբառին մէջ գործածական բառեր. ասոնք են հերոս և նահատակ Պետրոս Փարեան (Բինկեանցի), Սարգիս Մինասեան (Զէնկիլէբցի), Բառնաբաս Զաքարեան (Կէյլէցի), Համբարձում Թոռնեան (Սեբաստացի), Յիշեալ գաւառներէն եղած բառերը գրեթէ բոլոր նոյն պարունակուն տուածն է. 1894/5 թուին ուսուցչական պաշտօնով գտնուելով Կարին՝ Սանասարեան վարժարանը, մեծապէս օգտուեցայ թէ տեղական բառերը հաւաքելով և թէ գաւառացի աշակերտներէս բառեր ստանալով: 1898-էն սկսեալ՝ կեանքս անցաւ շարունակ ճամբորդութեամբ, այսպէս 1898—1902 էջմիածին, 1902—4 Շուշի, 1904—6 Թաւրիզ, 1906—7 Նոր-Բայազետ և այնուհետեւ Նոր-Նախիջևան: Ամէն տեղ առիթ ունեցայ բառ հաւաքելու: Էջմիածին եղած ժամանակս շատ օգտուեցայ ճեմարանի աշակերտներէս և բազմաթիւ գաւառացի պանդուխտներէ՝ որոնք եկած էին հայութեան զանազան մօտ կամ հեռու կեդրոններէ: Օգտուելով ճեմարանի և վանքի գրադարանէն՝ ձեռք զարկի հաւաքել բոլոր այն բառերը՝ որ զանազան թերթերու և գրքերու մէջ հրատարակուած էին: Այս գործը իսկապէս շատ դժուարին էր. հայերէն թերթերը մասնազրկական գոյն երբէք ունեցած չեն. նոյն իսկ յեղափոխական թերթի մը մէջ լեզուաբանական յօդուած գտած եմ, աւելցնեմ նաև այն որ դեռ լիակատար հայ գրադարան մը չունինք: Սակայն յարատուութիւն և աշխատութիւն յաղթող են ամէն բանի: Եւ այսօր, երբ 20 տարիներու անցեալ մը ունիմ ետեւ, կրնամ ըսել թէ քիչ բան անմատչելի մնացած է ինձ. գրեթէ բոլոր կարևոր (նաև անկարևոր) յօդուածները, աշխատութիւնները, գաւառական բառեր ու նմոյշներ պարունակող գրուածքնե-



րը աչքի առջև ունեցած եմ: Բացի ասոնցմէ ինձ համար առանձին գաւառական բառերու հաւաքածունք տուած են:

1. Կ. Պատմաճեան. տուած է ամբողջ տետրակ մը բառ, տեղերը անծանօթ. նոյն տետրակը ուղարկուած էր նաև Ս. Գաւառաճեանին՝ օգտուելու համար իր կազմած բառարանին մէջ:

2. Տէր-Դաւթեան Զաքարիա. տուաւ 1000 բառ՝ Ղարաբաղի բարբառէն:

3. Աբ. Ալէքսանեան. տուաւ 130 բառ՝ Ղարաքիլիսէէն, Դավրիդէն և Ղարադաղէն:

4. Աւ. Բահաթրեանց. տուաւ 1000 բառ Ղարաբաղէն:

5. Ս. Մինասեան (գասարնկերս). վերը յիշուածներէն դուրս տուաւ 472 բառ Չէնկիլէրէն:

6. ԲԺԻԶԿ Անդրանիկ Յակոբեան. տուաւ 405 բառ՝ Խարբերդէն:

7. Գալուստ Իսքէնտէրեան. տուաւ 170 բառ Վանէն:

8. Կինս՝ Արուսեակ Աճառեան 717 բառ Ղարաբաղէն (նախորդ հաւաքածունքէն և իմ հաւաքած բառերէս դուրս՝ բոլորովին նոր բառեր):

Սրտագին շնորհակալութիւններս բոլորին:

Ահա այս բոլորին արդիւնքն եղաւ ներկայ գաւառական բառարանս, որ ունի 30,000-է աւելի բառ ու ոճ:

Աշխատութիւնս կազմուած է համաձայն այն պայմաններուն, որոնք վերը բացատրեցի: Գրքիս մէջ առնուած են զուտ գաւառական բառերը, այսինքն անոնք միայն՝ որ հին մատենագրութեամբ աւանդուած չեն, կամ աւելի պարզ խօսելով՝ Վենետիկի Առձեռն բառարանին մէջ չկան: Բուն հայ բառերը, ինչքան ալ հազուադիւս ձև մը ներկայացնեն անոնք և ինչքան ալ հետաքրքիր ըլլան, դուրս են թողուած. ասոնցմէ առած եմ միայն անոնք որ առանձին՝ գրաբառէն տարբեր ձև մը ունին. ինչ. կոզնի «ոզնի» բառը: Օտար բառերը անխնայ կերպով վտարուած են աշխատութենէս, ինչքան ալ գեղեցիկ և օգտակար ըլլան անոնք: Իբր հազուադիւս բացառութիւն ընդունած եմ միայն քանի մը այնպիսի օտար բառեր, որոնք բոլորովին հայացած են. ինչ. պիլս, քոկ, պոօ, ըռզակ ևն: Պատահեցան այնպիսի բառեր ալ՝ որ թէև ըստ երևոյթին օտար ըլլալու էին, բայց որովհետև իմ միջոցներովս չեմ կարողացած ստուգել, ուստի պահած եմ, աւելի լաւ համարելով առ այժմ լինել սխալ քան թերի: Այս բառերը կրնան ըլլալ քուրդերէն, արեւելեան թուրքերէն կամ վրացերէն փոխառութիւններ: Կէս հայ և կէս օտար բառերը նոյնպէս ընդունած

ևս, բայց միայն թարգմանաբար ամբողջը հայերէնի վերածելով և քովը փակագծի մէջ բնիկ ձևը նշանակելով, ինչ. ծակ-բուկ (ծակ-պողապ), երիսասարդաեկնի (ջահիւաշէնք) ևն:

Գաւառական բառերը դրուած են այն ձևով և ուղղագրութեամբ՝ որ համեմատական քննութիւնը երևան հանած է. եթէ ասոր բնիկ ձևը ինքնին հասկանալի չէ կամ նախաձեռն բաւական հեռացած ըլլալով՝ հետաքրքիր է, փակագծով նշանակած եմ. Իւրաքանչիւր գաւառական բառի քով համառօտագրութեամբ դրած եմ բառին գործածուած տեղը: Այս պարագային կարելի չէր անշուշտ նշանակել գիւղերը. օր. բոլորովին անյարմար կ'ըլլար մի առ մի յիշել Նախիջևանիկ, Քիսթուկ, Փիրջամալ, Վարազաբոյն, Նենգի, Մովստեղ, Քարինտակ, Հունոտ, Շօշու, Ղայթալուշէն, Դաշուշէն, Զարդանաշէն, Հադրութ, Տող, Գիշի, Զոր, Տեղ, Թաղոտ, Վանք ևն ևն, որոնք Ղարաբաղի գիւղերն են. կամ նոյնպէս ելլել մի առ մի նշանակել Էջմիածին, Փարաքար, Հայթաղ, Օշական, Աշտարակ, Փարպի, Բիւրական, Մուղնի, Ուշի, Մաստարա և այլն, և այլն. այսպէսով հարկ պիտի ըլլար ամեն մէկ բառի քով Հայաստանի աշխարհագրութիւնը արտագրել. ուստի բաւականացայ միայն դնելով գաւառը կամ քաղաքը. Ղրբ. Երեւ. և այլն: Ընթերցողները կրնան երբեմն գտնել պարզ գիւղի մը անունը. ինչ. Օշական, Աշտարակ, Էջմիածին, Եալովա, Չէնկիլէր, Պէրաէկէօզ և այլն, ասիկա այն պատճառով է որ չեմ կրցած ստուգել թէ նոյն բառը արդեօք շրջակայքին կամ ամբողջ գաւառին ալ յատուկ է, թէ չէ: Ուր որ հարցական կայ՝ կը նշանակէ թէ նոյն բառին որ գաւառականէն ըլլալը յայտնի չէ ինձ. այսպիսի բառեր առնուած են զանազան դրքերէ. անձամբ չեմ կրցած ստուգել զանոնք. ուստի այնքան վստահելի չեն: Այս պարագային շատ անգամ աղբիւրը յիշած եմ, վստահութեան աստիճանն ալ որոշած ըլլալու համար: Նոյնպէս վարուած եմ այն բառերու համար, որոնք որեւիցէ պատճառով կասկածելի կը թուին ինձ: Միւսներուն աղբիւրները յիշել բոլորովին աւելորդ համարած եմ, նախ գիրքս կրկնակի և եռակի չընդարձակելու համար և երկրորդ, որովհետեւ այդ բառերը մեծագոյն մասամբ անձամբ ստուգած և հաստատած եմ:

Երբ զանազան բարբառներ զանազան ձևեր կամ բառեր ունին, ասոնք կարգով շարած եմ առաջինին քով. յետոյ դրած եմ նշանակութիւնները: Գաւառական բառերը առհասարակ մի քանի նշանակութիւններ ունին. եթէ այս նշանակութիւնները յատուկ են միեւնոյն գաւառականին, նշանակած եմ պարզապէս 1, 2, 3... Թուանշաններով՝ առանց գաւառները նորէն և նորէն կրկնելու: Բայց երբ նշանակութիւնները գաւառէ գաւառ կը տարբերին, ամէն մէկ

Թուանշանի քով դրած եմ տեղերը: Եթէ որեւէ թուանշանի քով տեղ նշանակուած չէ, պէտք է հասկնալ թէ այդ նշանակութիւնը գործածական է այն տեղերը որ նշանակուած են անմիջապէս նախորդ թուանշանին՝ քով: Նոյնպէս հասկնալու է նաեւ բառի մը զանազան ձևերուն համար: Օրինակով մը բացատրենք այս բոլորը:

Թնջուկ Արբ. Խրբ. Մլկ. Մշկ. Պլ. Սվ. Բ. քնջիկ բբ. քնջկած Խրբ. քնջկուած Խրբ. քնջկուռկ Մն. (ած.) երկար ժամանակ չը սանտրուելէն խառնուած գծձուած Թաղկեալ (մաղ), որ սանտրելը դժուար էր լլայ. քնջուկ մագեր. Ի՛նչ քնջկուած մագեր ունի: 3. Եւդ. Խրբ. Պլ. Սվ. (զոյ.) խառնուած մագեր գլխուն վրայ, եկուր սա գլխուդ քնջուկները հանել: 3. սանտրելէ ետք Թնջկահանին վրայ հաւաքուած խառնակ մաղը. աւ Ի՛նչչալի քնջուկ ելաւ: 4. Սվ. դերձանի (Թելի) խճճուած մասեր, խճճուած Թել. 5. Բիւթ. տեսակ մը ազնիւ սունկ:

Հատուածին սկիզբը դրուած է քնջուկ և այս ձևը գործածող 7 գաւառականները, յետոյ կուգան 4 ուրիշ ձևեր՝ ուրիշ գաւառականներով: Առաջին նշանակութիւնը կը պատկանի բոլոր այս 5 բառերուն: Երկրորդ նշանակութեան դէմ դրուած է Եւդ. Խրբ. Պլ. Սվ. ուրեմն այս նշանակութիւնը յատուկ է միայն այս չորսին. ասոնցմէ վերջին երեքին ձևը յայտնի է՝ վերը արդէն յիշուած ըլլալով (Խրբ. քնջկած, քնջկուած, Պլ. Սվ. քնջուկ), իսկ Եւդ. չկար, ուստի ունի հատուածին սկիզբը դրուած բառաձևը՝ որ է քնջուկ: Երրորդ նշանակութեան դէմ տեղ չէ դրուած, ուստի պէտք է հասկնալ նախորդ՝ այն է 2-րդ նշանակութեան տեղերը և ձևերը: Չորրորդ նշանակութեան դէմ դրուած է Սվ. ուրեմն յատուկ է միայն Սվ. գաւառականին և հետևաբար միայն քնջուկ ձևով: Հինգերորդ նշանակութեան դէմ դրուած է Բիւթ. ուրեմն յատուկ է միայն այս գաւառականին. այս տեղը նշանակուած չէր վերը, ուստի հասկնալու է թէ ունի հատուածին առաջին ձևը (քնջուկ):

Գաւառական բառերէն դուրս դրած եմ նաեւ խիստ բազմաթիւ ոճեր, որոնք նշանակուած են գծիկով, — տեղի խնայողութեան համար այս ոճերը յիշուած են միայն գլխաւոր բառին տակ. օր. գլուխ տալ ոճը նշանակուած է գլուխ բառին տակ, բայց կրնայ այլապէս ալ պատահիլ, ուստի ընթերցողը եթէ մէկ բառի տակ չը գտնէ, միւսով փնտռելու է:

Հետեւելով ֆրանսական նշանաւոր առածին՝ Un dictionnaire sans exemples est un squelette, ուր որ պէտք է աշխատած եմ բառերուն գործածութիւնը օրինակներով ճշտել. այս օրինակները

վերածած եմ գրականի, առանց սակայն շեղուելու գաւառականին
ոճէն ու ոգիէն: Տեղ տեղ զըռւած պատկերներն ալ կը ծառայեն
անծանօթ առարկաները մօտիկէն ճանչցնելու:

Բառարանս նաեւ ստուգաբանական է. բառերուն կազմու-
թիւնը գծիկներով ցուցուած է. զուտ արմատական ձևերը՝ այ-
սինքն անոնք որ գրաբարի մէջ գոյութիւն չունեցող բոլորովին
նոր արմատ մը երևան կը հանեն, նշանակուած են աստղանիշով:
Այս արմատներէն անոնք, որոնց ստուգաբանութիւնը իմ կամ
ուրիշներու քննութեամբ երևան ելած է, համառօտիւ նշանակած
եմ բառին վերջը:

Հ. ԱՃԱՌԵԱՆ

1910 Մարտ 17.

Նոր-Նախիջևան



Die erste der beiden Hauptthesen lautet: „Die menschliche Seele ist unsterblich.“ Diese These ist in der Philosophie seit Jahrhunderten Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Platon, behaupten, dass die Seele unsterblich ist, während andere, wie Aristoteles, behaupten, dass sie sterblich ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Identität der Seele diskutiert. Die zweite These lautet: „Die menschliche Seele ist immateriell.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Descartes, behaupten, dass die Seele immateriell ist, während andere, wie Locke, behaupten, dass sie materiell ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Natur der Seele diskutiert.

Die dritte These lautet: „Die menschliche Seele ist einfach.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Descartes, behaupten, dass die Seele einfach ist, während andere, wie Locke, behaupten, dass sie komplex ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Struktur der Seele diskutiert.

Die vierte These lautet: „Die menschliche Seele ist immortell.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Platon, behaupten, dass die Seele immortell ist, während andere, wie Aristoteles, behaupten, dass sie mortal ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Dauer der Seele diskutiert.

Die fünfte These lautet: „Die menschliche Seele ist unteilbar.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Descartes, behaupten, dass die Seele unteilbar ist, während andere, wie Locke, behaupten, dass sie teilbar ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Einheit der Seele diskutiert.

Die sechste These lautet: „Die menschliche Seele ist unendlich.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unendlich ist, während andere, wie Kant, behaupten, dass sie endlich ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Ausdehnung der Seele diskutiert. Die siebte These lautet: „Die menschliche Seele ist unerschöpflich.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unerschöpflich ist, während andere, wie Kant, behaupten, dass sie erschöpflich ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Kraft der Seele diskutiert. Die achte These lautet: „Die menschliche Seele ist unzerstörbar.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unzerstörbar ist, während andere, wie Kant, behaupten, dass sie zerstörbar ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Beständigkeit der Seele diskutiert.

Die neunte These lautet: „Die menschliche Seele ist unendlich.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unendlich ist, während andere, wie Kant, behaupten, dass sie endlich ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Ausdehnung der Seele diskutiert. Die zehnte These lautet: „Die menschliche Seele ist unerschöpflich.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unerschöpflich ist, während andere, wie Kant, behaupten, dass sie erschöpflich ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Kraft der Seele diskutiert. Die elfte These lautet: „Die menschliche Seele ist unzerstörbar.“ Diese These ist ebenfalls Gegenstand der Debatte. Einige Philosophen, wie Spinoza, behaupten, dass die Seele unzerstörbar ist, während andere, wie Kant, behaupten, dass sie zerstörbar ist. In der modernen Philosophie wird diese These oft in Bezug auf die Beständigkeit der Seele diskutiert.